Եփրեմ վարդապետի ժամանակ ՉՂԷ (= 1348) թուականին Սարգիս ? որդի Սմբատայ եւ թոռն Լիպարտի տէր Փանձաթաղին նուիրում է «ի մեր հալալ հայրէնեաց որ ի Փանձաթաղին զՄաղմանենց եւ զԱւանչահեց էգին» եւ ստանում Աստուածածնի տօնին վեց պատարագ (Ա. 162, պատկ. 189)։ Փանձաթաղ կամ Փոնձաթաղ անունով վայրի մասին խօսել ենք առաջ(*), որ ներկայ Քեշիշքեանդի մօտն էր, իսկ նուիրատուն Օրբէլեանց տոհմից. ոչ հեռու այդ տեղից՝ Վարդանի բերդը՝ սեպհականութիւն էր Զեսար Օրբէլեանի. այս սարգիսն էլ նորա մերձաւորներից մէկն էր, որի մասին մեզ անյայտ աղբիւրից տեղեկութիւն ունի եւ Ալիշան, որ գրել է Օրբէլեանց ճիւղագրութեան մէջ(**)։ Պէտք է ասել, նուիրատուի անունը շատ աղօտ է արձանագրութեան մէջ, ուստի և կարդացուած է Ջալալեանի կողմից «Ես Բենարիտի Մամա թոռն», Քաջբերունին՝ «Բենարդի», Ալիշան՝ «Բենա», Ouvar. Mat. XIII. խառնած է բոլորովին և դուրս է եկել «ես Պետրոս որդի Աբրահամ թոռն». մենք էլ (Խաղբ. Ա. 41) կարդացել ենք «կենա»։ Բայց լուսանկարը երկար և ուշադրութեամբ քննելուց յետոյ, պարզուեց, որ պէտք է լինի «Եսարգիս որդի Սմբատա թոռն» ևն.։ Այս Սմբատն էլ Խաղբակեանների Սպիտակաւոր Աստուածածնին նուիրել է Վախտանգենց այգին ՉՁԸ թուականին, որից մակաբերել կարելի է, որ նրանք խնամութեամբ կապուած էին իրար հետ. այդպիսի երեւոյթ նկատւում է իշխանական տոհմերի արձանագրութիւնների մէջ(***)։

ԺԴ. դարի քառասնական կամ յիսնական թուականների սկզբին պիտի նշանակել Ամիր-Հասանի թոռը և Էաչիի որդի Զումայի և նորա կնոջ Խոնդզի արձանագրութիւնը, եկեղեցու ներսը՝ արեւմտեան պատի վերայ՝ դրան մօտ (Ցաւել. Ա. 27, պատկ. 92), որոնց մասին խօսել ենք արդէն։

Տաճարի պատերին մնացած արձանագրութիւններն անթուական են և չեն կապուած պատմական անձանց անուան հետ, որով կարելի լինէր ժամանակները որոշել. յամենայն դէպս նրանք ԺԴ. դարի կէսերից վաղ են։ Այսպէս Թէիկ ոմն և ոչ Թեկղի, ինչպէս տալիս են Ջալալեան (Բ. 210), Ալիշան (122), Ouvar. (129), որ ստուգուած է մեր կողմից տեղում և կրկին անգամ լուսանկարի վերայ, միաբանում է ընծաներով և երկու ժամ ստանում (Ա. 163, պատկ. 186)։ Արձանագրութիւնը գտնւում է հարաւային պատին արեւելեան կողմը։

Նոյն պատին բաժակից ջուր խմող երկու սիրամարգների քանդակի տակ, Սեթարը քսան դահեկան է տուել և մի օր ժամ ստացել «Նավայսարին» (Ցաւել. Ա. 164, պատկ. 190)։ Սորա տակը՝ Պետրոս զանգակի ծախս է տալիս և երկու ժամ ստանում (Ա. 165). զանգակի գինը պիտի լինէր ոչ աւելի քան քառասունից յիսուն դահեկան, որովհետև սովորաբար իւրաքանչիւր ժամի համար նուէր է տրւում այս ժամանակները քսան կամ քսան և հինգ դահեկան։

Նոյն պատին աղաւնի յոչոտող բազէի քանդակի տակ Արեւհարը միաբանում է, քսան դահեկան տալով և մի ժամ ստանում Խաչգիւտին (պատկ. 190, Ցաւել. Ա. 166)։

Արեւելեան պատին «Բուբայիս թոռնս Սամադաւլին» եւ (թէեւ ?) «Սարգիս», տալիս է Ջարինայ «վարի» հողը «նացան» հայրենիք, «նաքան տվին զԱյտնութեան.» հինգ օր լինը խորանում (Ա. 167, պատկ. 189)։ Պարզ չէ, թէ սրանք տարբեր անձնաւորութիւններ է՞ն, ուրեմն, առաջնի արձանագրութիւնը կիսատ մնացած և շարունակութեան վերայ երկրորդի՞ն սկսած, թէ երկանուն մի անձնաւորութիւն է։ Ուշադրութեան արժանի լեզուաբանական բարբառագիտութեան տեսակէտով չակերտների մէջ առնուած ձեւերը, որ յատուկ են Ն. Նախիջեւանի բարբառին։ Արձանագրութիւնը գտնւում է Ուքանի և Լիպարտի թոռ Սմբատայ որդի Սարգսի արձանագրութիւնների գլխին, որ ԺԴ. դարի առաջին յիսնամեակի գործ համարեցինք. այս էլ մօտաւորապէս նոյն ժամանակի գործ ենք ընդունում հնագրական նշաններից դատելով։

Արեւմտեան դրան աջ կողմից չինութեան արձանագրութեան տակ Բաւբինայի արձանագրութիւնն է, որ ընծայ է տալիս Ս. Ստեփանոսին և երկու օր պատարագ ստանում Ս. Խաչին (Ա. 168. պատկ. 185)։ Սորա տակն է մի շատ եղծուած արձանագրութիւն, որի ճիշդ ընթերցմանը վստահ չենք. ոմն Նաւորդ? Խաթուն և ամուսինը Սախո՞խ թէ Վախոխ և Մուրադ փաշէս տալիս են իրենց գնած էգին (Ա. 169)։

Տաճարի ներսը, դրնից դէպի հարաւ, ոմն Աւֆսուլիտ քառասուն դեկան է տալիս եւ երկու ժամ ստանում Ս. Սարգսին (Ցաւել. Ա. 70). Ջալալեան, Քաջբերունի, Ալիշան և Ouvar. նուիրատուի անունը կարդում են «Աւագ սուլիմս», բայց իրարից արտագրելով։ Մի ուրիշ փոքր արձանագրութիւն էլ ունինք հիւսիսային կամ աջ աւանդատան պատին, երկու խաչերի կողքին, Ամիր շահի (Ա. 154) արձանագրութիւնից բարձր, Պետրոսի և իւր ծնողաց յիշատակին (Ա. 171). պէտք է ենթադրել չինութեան ժամանակից. տեղից դատելով աւանդատան հետ կապուած։

Մի շարք թուականով խաչքարեր ևս ունինք վանքի այլ և այլ կողմերում. նոցանից երեքը (153ա–153գ), որ աւելի հին էին, քան ներկայ շէնքը, տեղ տոհմի իշխանը, մանաւանդ աւագ իշխանը, որ պէտք է լինէր Ուքանը, թաղուէր մի այլ տոհմի վանքում։ Բայց Շահուռնեցիք Օրբէլեանների սպարապետներն էին, նրանց արքունիքի հետ կապուած, ինչպէս այդ հաստատ գիտենք Ամադինի մասին վերև յիշած աւետարանի յիշատակարանից։ Ցախաց քարում թաղուած Ուքանը կարող է և մեր նուիրատուի նոյնանուն հօրեղբայրը լինել։

(*) Խաղբակեանք Ա., եր. 41։
(**) Սիսական, եր. 192։
(***) Խաղբակեանք Ա., եր. 209։